

տարուայ անցեալը, երբ այնտեղ ոչ թէ բժիշկ,
այլ մի ֆիզիքեր անգամ չկար:

Մ. 2.

* *

Գէպի վեր, սարն ի վեր, անվեհեր զինուոր
Յովն. Յովնամնիսեան

Եթէ դու լեռն ի վեր որոշեցիր բարձրանալ,
Չը փոխես քո ճամբան. յառաջ զնա անհրկմիտ.
Եւ հիթէ բարձունքում մէզն ըսկսէ թանձրանալ,
Չը զողանս. քիզ ինչ վոյթ.— ցածուն մընայ թըշ-
նամիդ:

Ու ետե չը նայես, թէ չէ սարսափն անդուն-
դի
Թիկունքիդ կը կապէ դահավիժող սև թևեր:
Վեր նայիր, հըզօր կաց, հէյ, պանծալի քաջոր-
դի,
Անլըքում մագըլցիր գէպի կատար՝ գէպի վեր:

Եւ հող չէ, թէ այնտեղ ընկնես անգօր, ուժա-
քամ.—
Կուտական բարձունքի թարմ, կենսաբեր շողե-
րից
Անտահման ոյժ կառնես, և կը նայես մի անգամ
Միզապատ աշխարհին՝ ճընշուած կեանքի խաչե-
րից:

Եւ այնտեղ՝ դադաթին, ուրախալի հանգստում՝
Աշխարհի վարակիչ, թունոտ հեքից հեռացած՝
Գու կը զգաս հողուզ մէջ հրճանք ու խինդ ան-
պատում

Եւ հրբէք չես իջնի պայծառ հողով գէպի ցած...

ՍԻՄ. ԲԱՔԻԵԱՆ

Եալթա.

* *

Գըլխիս վերև վըզզացող բիւր զընդակ,
Շուրջնս՝ գեհեն, ես՝ նօթի ու ծարաւ.—
Ա՛խ, յոգնեցի. մարտն այսօր շնա էր տաք
Բողբովին ուժասպառ ինձ արաւ:

Բուն մանելու. մի անկիւն ևս կուզեմ.
Ոտքերիս մէջ կանգնելու ոյժ չը կայ:
Ես անդորրում խոնջ ոգիս կը սուզեմ—
Եւ կարթնանամ իբր անյնգթ մի հըսկայ:

Վաղը դարձեալ ուզմի դաշտ կը գնամ
Եւ կողակուեմ դիւային դարկերով.
Կնամ ես այնտեղ դիտկած կը մընամ,
Կնամ կը դառնամ հերոսի փառքերով...

ՍԻՄ. ԲԱՔԻԵԱՆ

Եալթա.

Մ Ա Մ Ո Ի Լ

Հայկական դպագրութեան 400-ամեակի առ-
թիւ այժմ Տիփլիսում ժողովներ, խորհրդակցու-
թիւններ են տեղի ունենում. միւս կողմից գա-
նազան խմբակցութիւններ առաջարկում են ի-
րենց մասին ևս մտածել և պէտք է ասել առա-
ջարկները բոլորն էլ համակրելի, տեղին են. այս-
պէս օրինակ «Մշակ»-ի № 30-ում «Գրաշար» ստո-
րագրութիւն զրոյ մէկը «Հայ գրաշարական
Ֆօնդի առիթով» յօդուածում ի միջի այլոց
զրոււմ է.

Հայ գրաշարներին նպաստող ֆօնդի
գաղափարը նոր չէ և ոչ էլ պատահականու-
թեան արգիւնք. այդ գաղափարը աւելի քան
հրկու տարի է, որ արծարծվում է մեր շըր-
ջանում և աւելի բուռն կիրառվ հրեան ե-
կաւ հանգուցեալ Դ. Աղայեանցի մահվան
առիթով, որով մենք ցանկանում էինք յա-
ւերժացնել հանգուցեալի յիշատակը՝ հիմնե-
լով նրա անունով հայ գրաշարներին նպաս-
տող ֆօնդ. բայց որպէս բանորի կասկա-
ծելով մեր նախածեռնութիւնից, իսկ զրոյից
ձեռնհաս անձանց կողմից աջակցութիւն չը
գտնելով, յետաձգել էինք ատժամապէս:

Հայ սուլագրութեան տօնը հայ գրաշա-
րի տօնը լինելով՝ համոզված ենք, որ այժմս
արդէն ոչ ոք չի ժխտի մեր իրաւունքը այդ
տօնի վրայ, և ում սրտին որ թանգ է հայ
սուլագրութեան դարգացումը, չի զլանայ իր
աջակցութիւնը հայ գրաշարներին նպաս-
տող ֆօնդի իրականացման:

Անշուշտ յօդուածագրի պահանջը արդարա-
ցի է. բայց որքան հնարաւոր է այդ մեր ցաւե-
րի ծով իրականութեան մէջ: Հէնց նոյն թերթի
նոյն համարում կարծես դիտամքը գիտեղուած է
«Իմ կտակը» յօդուածը Գաւառ. վարժ. Սաթ.
Զաքարեանի, որը 25 տարուայ ուսուցչական
զործունէութեան զրկանքը տանելով, հայ վար-
ժապետի աննախանձելի կացութիւնն է նկարա-
զրում. սպա կծու ծագրով համեմած իր «կտա-
կըն է» զրում:

Նկատելով այն ևս, որ կեանքում գո-
յութիւն ունին օրէնքներ, սրանցով զեկա-
վարվում են մարդիկ՝ թէ իրանց առանին

սովորական կենցաղում, թէ հասարակական կեանքում, և որ այդ օրէնքների համաչափ գործադրութիւնից է կախված մարդու իրաւական ու բարոյական գրութիւնը,—ես որոշեցի՝ որպէս աւանդապահ մարդ՝ չը շեղվիլ օրէնքից, նախ քան յաւիտենական ճանապարհորդութիւնս՝ օրինական կարգով տնօրինել իմ թերի պարտականութիւններս գէպի այն միջավայրը, որի մէջ այնքան ապրեցի, աւելի բաւ է ասել՝ տոռապեցի:

Անս այդ առիթով կազմեցի հետեւեալ կտակս, որի օրինականութեան հրդուեալ վկաներ են՝ չարքաշ կօլլէգներս ու սիրեցեալ սաներս, իսկ կտակակատարներ՝ գիտակից հասարակութիւնը:

Անշարժ կայքեր.—Տուն ու տեղ, հող չեմ ունեցել ու չունեմ. դրս փոխարէն չորս որբեր, որոնցից երեք սովորողներին՝ կտակում եմ համեստ բարեբարներին:

Շարժական կայքեր.—Երկու պահարան դրբեր, որոնցով ապրել եմ, կտակում եմ գիւղական աղքատ դպրոցներին. մի համեստ ժողովածու արծաթ և պղինձ հին գրամանրի՝ Ուսուցչական Ֆօնդին:

Մի քանի հին գէնքեր, քարացած մարմիններ, հին ձեռագործներ, ինչպէս և իմ գրիչս ու թանաքամանս, որոնք երկար տարիներ եղել են իմ յոյզերի և խոհերի ընկերն ու արտայայտիչը, նուիրում եմ Ազգազարկան Ընկ. թանգարանին:

Մի քանի՝ ճանապարհորդական անհրաժեշտ իրեր, որոնք տոկունութեամբ ինձ ուղեկից են եղել, ինչպէս անձրեակալ, ճամպրուկ, ձեռքի ցուպ, հեռագիտակ և այլն և այլն, կտակում եմ թափառական ուսուցիչներին:

Չգացումներս—անկաշառ սէր դէպի աշակերտութիւնը, յարգանք դէպի ծնողները, անձնանուէր աջակցութիւն ժողովրդական ցաւերին, համբերութիւն, տոկունութիւն, բարեխիղճ աշխատանք—թողնում եմ նորակոչ ուսուցիչներին:

Զուակաց պերարկունները—որոնք այս տարի խալաո հրաժարվեցին նիհար մարմինները պատասպարհու, աւարկելով թէ ընդճանուր կարգը խանգարված է 4—5 տարվայ ընթացքում, օձիքը իր տեղումը չէ, գրպանները՝ իր և այլն—նուիրում եմ էջմիածնի հնազիտական թանգարանին:

«Նոր-Դպրոցի» միամեայ բաժանորդագրիւր, ընկ. գրավածառներ Մ. Տ.—թովմասեանի և Գ. Մթոյեանի՝ դաւակացս մի տարւայ դասական պիտոյքների չը վճարուած ապառիկները թողնում եմ հոգով հարուստներին:

Այսպէս՝ խաղաղ սրտով, անվրդով հոգով դիմում եմ փրկչական կոչին՝ «Եկաջք առ իս, ամենայն վաստակեալք և բնանաւորք, և ես հանգուցի դձեղ»: Պատճէնն ուղարկված է «սկզբունքով» թեմ. տեսուչներին և «ցեկնաւոր» հոգաբարձուներին:

Որքան դառն է տպաւորութիւնը: Ո՞ր մէ-

կին օգնել. որին անուանը, ապահովութեանը ֆօնդ կազմել. որքան մեծ է Հայկական տպագրութեան 400-ամեակը. նոյնքան բազմապիսի են առաջարկութիւնները. Հասարակութիւնը թող իր աշխատաւորների ցաւերը ամօքէ արժանավայել կերպով այդ մեծ յօբելիանի առթիւ:

ԿԵՑՑԷ՛ ՊԱՆՔԸ

Ռաստով մենք ունինք վզայիմնըյ մէկ պանք,
Քառասուն տարիներ ունեցիլ է կեանք,
Քառասուն տարիներ քաղաք-գեղերուն
Մտակով հասիլ է ամեն պէտքերուն:
Ատ քառասուն տարին շթէ սէպէպ արին,
Բարի գործի մը ամուր հիմք գրին:
Քառասուն հազար փող մեր դպրանոցին
Լիազորները հոն յատկացուցին:
Ատոր տոկոսով մեր դպրանոցը
Պիտ սորվեցունէ չունիմ տըղոցը:
Սֆֆերիմ քեզի, վզայիմնըյ մեր պանք,
Քու զովասանքդ ամենքըս կուտանք:

Շաբաթներ առաջ մեր «Լոյս» կազէթը
Գրից խիստ շատ պան. ան էր խայրէթը,
Որ դպրանոցը ապահով ըլա,
Հայերուս համար լուսի պէս ցուա:
Տուն ալ մաս ունիս փաստարան Չուպաո,
Որ պանքը ասիր խիստ տեսօք մէկ ճաո,
Այէքսանոֆն ալ քեզի հասկըցաւ,
Քուկուզ ճառերուդ պէթէր հաւնեցաւ,
«Ինչո՞ւ պակաս տանք, տանք քառասուն հա-
զար,

Ատով մենք պանքին հիչ չինք տալ զարար:
Ձէնկին աղաներ քանի մը հոգի
Նստան տեղերը ու շելլան ոաքի,
Բայց շատը հայի հոգիով վառուած,
Քառասուն հազարը հէչ չի մեղըրցած,
Մեր դպրանոցին հանեցին տուին
Ու ատով նարա ապահով արին:
Աս պանքի մէջի ծառայողներուն
Շնորհակալ ինք արած գործերուն,